ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 04

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ք. Երևան **24.06.2025թ.**

1. **Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 2025 թվականի հունիսի 24-ի հերթական նիստին մասնակցում էին.**

Գ.Պապոյան	– ՀՀ էկոնոմիկայի նախարար, Խորհրդի նախագահ
Ժ.Խառատյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ, Խորհրդի անդամ
Տ.Դադունց	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ
Ն. Հովակիմյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ
Լ.Նանուշյան	- ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ
Է. Էլբակյան	- ՀԱՊՀ մինչբուհական կրթության գծով պրոռեկտոր , Խորհրդի անդամ
Կ. Չիլինգարյան	- «Սպառողների խորհրդատվության կենտրոն» նախագահ, Խորհրդի անդամ
Տ. Քեյան	- «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի աջակցության ծրագրերի ղեկավար, Խորհրդի անդամ
Կ.Սահակյան	- ԵՊՀ դասախոս, տնտեսագիտական գիտությունների թեկնածու, Խորհրդի անդամ
Ա. Կոտոլյան	– Տեսչական մարմնի ղեկավար
Ա. Մկրտչյան	– Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ

Գ. Սահակյան - Խորհրդի քարտուղար

2. Հերթական նիստի օրակարգում ընդգրկված հարցերն են.

1. Նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ քննարկում:
   Զեկուցող՝ Ա.Կոտոյան

1.1 Բենզինի օկտանային թվի փորձարկում իրականացնելու վերաբերյալ քննարկում:
   Զեկուցող՝ Ն.Հովակիմյան

2. Էլեկտրական մեքենաների լիցքավորման կայանների ստուգաչափում և էլեկտրական մարտկոցների ուտիլիզացիա:
   Զեկուցող՝ Ա.Կոտոյան

3. Որպես «OUTLET» գործող տնտեսվարող սուբյեկտների կողմից իրացվող արտադրանքները համապատասխանության գնահատման ենթարկելու հարց:
   Զեկուցող՝ Ա.Կոտոյան

Տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2025 թվականի հունիսի 24-ի չորրորդ հերթական նիստը սկսվեց օրակարգի հաստատմամբ:

Օրակարգի առաջին հարց՝ նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ քննարկում՝ զեկուցող՝ Ա.Կոտոյան:

Տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյանը հայտնեց, որ նախորդ նիստին տրված էր ընդամենը մեկ հանձնարարական՝ կապված բենզինի օկտանային թվի փորձարկում իրականացնելու հետ և քանի որ հարցի հետ կապված ճշտումներ իրականացնելու խնդրանքով դիմել էինք Նարեկ Հովակիմյանին, առաջարկեց հարցի վերաբերյալ քննարկումը թողնել վերջինիս:

Հարցի վերաբերյալ ծավալվեց լայն քննարկում, ինչի արդյունքում Նարեկ Հովակինյանը առաջարկեց Արմեն Կոտոյանին մինչև Տեսչական մարմնի նմուշառման, լաբորատոր փորձարկումների և չափումների վարչությունում առկա բենզինի օկտանային թվի փորձարկում իրականացնող սարքի հավատարմագրման իրականացումը, որն իրենից ներկայացնում է բավականին երկարատև գործընթաց,

Տեսչական մարմնի կողմից այսուհետ իրականացվող ստուգումներով տեսչական մարմնի նմուշառման, լաբորատոր փորձարկումների և չափումների վարչությունում ստուգման ընթացքում վերցված ավտոմոբիլային բենզինի փորձանմուշի փորձարկման արդյունքում որոշված օկտանային թվի դրական արդյունքը ընդունել որպես հիմք, իսկ բացասական արդյունքի դեպքում որպես հիմք ընդունել փորձարկման նպատակով Հայաստանի Հանրապետությունում գործող հավատարմագրված փորձարկման լաբորատորիա հանձնված ավտոմոբիլային բենզինի փորձանմուշի փորձարկման արդյունքում որոշված օկտանային թիվը և այն համարել վերջնական:

Արմեն Կոտոյանը համաձայնեց առաջարկի հետ, ինպես նաև հայտնեց, որ այն կնպաստի բավականին գումար տնտեսելուն և ավելի շատ քանակությամբ ստուգումներ իրականացնելուն:

Որոշվեց միաձայն՝ Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կողմից այսուհետ իրականացվող ստուգումներով տեսչական մարմնի նմուշառման, լաբորատոր փորձարկումների և չափումների վարչությունում ստուգման ընթացքում վերցված ավտոմոբիլային բենզինի փորձանմուշի փորձարկման արդյունքում որոշված օկտանային թվի դրական արդյունքը ընդունել որպես հիմք, իսկ բացասական արդյունքի դեպքում որպես հիմք ընդունել փորձարկման նպատակով Հայաստանի Հանրապետությունում գործող հավատարմագրված փորձարկման լաբորատորիա հանձնված ավտոմոբիլային բենզինի փորձանմուշի փորձարկման արդյունքում որոշված օկտանային թիվը և այն համարել վերջնական:

Օրակարգի երկրորդ հարց՝ Էլեկտրական մեքենաների լիցքավորման կայանների ստուգաչափում և էլեկտրական մարտկոցների ուտիլիզացիա՝ զեկուցող՝ Ա.Կոտոյան:

Տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյանը Խորհրդի անդամներին հայտնեց, որ այսօրվա դրությամբ արդեն բախվում ենք մի հարցի, որ էլեկտրական մեքենաները լիցքավորման կայաններում հանդիպում են թերլիցքավորումների և գնալով բողոքների վիճակագրությունը ավելանում է: Տվյալ ոլորտը Տեսչական մարմնի կողմից չի վերահսկվում, ավելին՝ էլեկտրական մարտկոցների ուտիլիզացիայի հարցը չկարգավորելու դեպքում կհանգեցնի բնապահպանական աղետի, քանի որ նոր մարտկոցի տեղադրումից հետո հինը նետվում է աղբաման, առանց մտածելու հետևանքների մասին, ուստի էլեկտրական մարտկոցների ուտիլիզացիայի հարցին

պետք է տրվի շուտափույթ լուծում: Հարցի վերաբերյալ Նարեկ Հովակիմյանը մեջբերելով միջազգային փորձը հայտնեց, որ աշխարհը դեռ չի կարողացել որևէ ստանդարտի շուրջ համաձայնի, որը կարող է ինչ որ չափանիշ մշակի էլեկտրական մեքենաների մարտկոցների լիցքավորման մեթոդների և ճշգրիտ ստուգման մեջ: Նա ասաց, որ այս փուլում իրատեսական չէ ակնհայտ խաբելը կանխել, քանի որ ստուգաչափման խնդիրը բաց է ողջ աշխարհում և այն շատ չի սրվում էլեկտրաէներգիայի համեմատ դիզելային վառելիքի կամ բենզինի շատ թանկ չլինելու հետևանքով, սակայն խնդիրը առկա է և տարվում է լուրջ աշխատանք շուտափույթ լուծման համար, դեռևս բաց է նույնպես ուտիլիզացիայի հարցը, չնայաց աշխատանքային կարգով հարցը պարբերաբար քննարկվում է շրջակա միջավայրի նախարարության գործընկերների հետ:

Օրակարգի երրորդ հարց՝ որպես «OUTLET» գործող տնտեսվարող սուբյեկտների կողմից իրացվող արտադրանքները համապատասխանության գնահատման ենթարկելու հարց՝ զեկուցող՝ Ա.Կոտոյան:

Օրակարգի երրորդ հարցը ներկայացրեց Տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյանը և Խորհրդի անդամներին հայտնեց, որ Հայաստանի Հանրապետությունում գործող «OUTLET»-ներում ունենք խնդիր, այն է, որ բոլոր տնտեսվարողները ներմուծում են մեծաքանակ տեսականի և համապատասխանության գնահատման ենթարկելու հարցը մեծ քանակի պարագայում ծանր ֆինանսական բեռ չի հանդիսանում տնտեսավարող սուբյեկտի համար, իսկ «OUTLET»-ի դեպքում ճիշտ հակառակը՝ ներմուծվում է մեծ տեսականի փոքր քանակներով և համապատասխանության գնահատման փաստաթուղթ ձեռք բերելու պարագայում ապրանքի գինը այնքան է ավելանում, որ «OUTLET»-ի գաղափարը դառնում է անիմաստ: Հարցի շուրջ իրականացվեց քննարկում, արդյունքում Արմեն Կոտոյանը ցանկացավ իմանալ Խորհրդի անդամների կարծիքը հարցի վերաբերյալ և առաջարկեց իր տարբերակը, այն է՝ տարեկան ծրագիրը կազմելու դեպքում եթե ստուգումների ծրագրում լինեն խանութներ, որոնք կազմակերպված են որպես «OUTLET», Խորհրդի համաձայնությամբ այդ խանութները դուրս բերվեն ստուգումների ծրագրից, փոխարենը ներառվեն այլ խանութներ, մինչև հարցին վերջնական իրավական լուծում տալը: Նարեկ Հովակիմյանը հայտնեց, որ այս հարցին իրավական լուծում տալը կարող է հանգեցնել այն բանի, որ խանութների մեծ մասը կսկսի գործել որպես «OUTLET» և քանի որ Հայաստանի Հանրապետությունում գործող այդ խանութները շատ չեն, առաջարկեց Խորհրդի

համաձայնությամբ նրանց նկատմամբ կիրառել մեղմ քաղաքականություն: Հարցի վերաբերյալ Արմեն Կոտոյանը որպես տարբերակ առաջարկեց նվազագույն քանակ դիտարկել 10, 20-ը և ավել քանակի դեպքում միայն ձեռք բերել համապատասխանության գնահատման փաստաթուղթ:

Նարեկ Հովակիմյանը առաջարկվեց ընդունելի համարել Արմեն Կոտոյանի տարբերակը՝ «OUTLET»-ների փոխարեն ստուգումների ծրագրում ներառվեն այլ խանութներ:

Խորհրդի նախագահ՝

_____ Գ.Պապոյան
ստորագրություն

Խորհրդի քարտուղար՝

_____ Գ.Սահակյան
ստորագրություն